

առջեւ «անսուաղ» մնացած լինին, ուսկից եւ պահքս սկսեր է (23): Այս վկայութեան մէջ կ'ընդունինք Առաջաւորաց չափն ու սահմանը, բայց ոչ եւ ծագումը, մեքենաբար կրկնուած նաեւ մեր հետագայ մատենագրերէն (Թղթ. 496, եւն), որ վարկպարագի կարծիք մ'է եւ հակառակ Ագաթանգեղոսի՝ որ նորադարձ Հայոց պահքը կը դնէ «վաթսուն եւ վեց» օր, ոչ եթէ հինգ (545): Զենորայ կարծիքն ինքնահնար կը թուի, անոր համար անձանօթ է իւր ժամանակակցին՝ Գր. Արշարունույ, որ Առաջաւորէն մինչեւ Նոր կիւրակէն տեւող եօթանասուն եւ ութ օրերուն մէջ՝ նահապետաց եւ հին ու նոր կտակարանի անցից խորհուրդները միայն կը տեսնէ (Արշ. ԺԲ): Սամուէլ կամրջածորեցին իւր ծանօթ վարդապետներէն շատ եւ իրարու աննման բաներ լսեր ու կարդացեր է. յորս եւ այն՝ թէ հինգօրեայս «ոմանք» Ագաթանգեղոսի աւանդած վաթսուն եւ վեց օրերուն առաջին կամ վերջին մասը կը համարին (Տօն. Գ):

Բայց աւելի հետաքրքրական է նոյն հօր միւս տեղեկութիւնը՝ թէ «ամենայն կողմն հարաւոյ», որ է Ասորիք եւ Եգիպտոս, մեզմէ աւելի կը պատուեն, կ'ըսէ, այդ պահքն՝ ի խորհուրդ Նինուէացւոց